## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
## ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<13>> փետրվար 2020թ. N 10

### *ԵՐԵՎԱՆ - ՄԵՂՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Հ. Վարդանյանի 23.01.2020թ. դիմումը՝*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

*1. Ստեղծել հանձնաժողով Երևան-Մեղրի միջպետական ճանապարհի Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող հատվածում առկա ժամանակավոր կառույցի և հեղուկ գազի լիցքավորման կետի գործունեության հիմքերը և ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Հ. Վարդանյանի դիմումում բարձրացված հարցն ուսումնասիրելու նպատակով:*

*2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:*

*3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Արենիի համայնքի ղեկավար Հ. Սահակյանին:*

*4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

*Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի*
*2020թ. փետրվարի 3-ի թիվ 10*
*որոշման*

## *Ռեսումնասիրություն իրականացնող հանձնաժողովի անհատական կազմը*

1. *Աղվան Հարությունյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),*
2. *Ազատ Հովսեփյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ (հանձնաժողովի անդամ),*
3. *Նարինե Մաղաքյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար),*
4. *Խաչիկ Ասլանյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ (հանձնաժողովի անդամ),*
5. *Մեսրոպ Մեսրոպյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ (հանձնաժողովի անդամ):*
6. *Աշոտ Մինասյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ):*

*ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝* *Կ. Սահակյան*